ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան,

1.Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 1-ին, 4-8-րդ մասերով՝ խնդրում ենք Ձեզ, 2020թ-ի դեկտեմբերի 28-ին, ժամը 11:00-ին գումարել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան, հետևյալ օրակարգով՝

1) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» (Կ-820-23.12.2020-ՊԱ 011/0) ՀՀ օրենքի նախագիծ,

(առաջին ընթերցում),

(երկրորդ ընթերցում):

2) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (Կ-818-22.12.2020-ՊԻ-011/0) ՀՀ օրենքի նախագիծ,

(առաջին ընթերցում)

(երկրորդ ընթերցում),

3) Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամի ընտրություն,

4) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում» լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-801-10.12.2020-ՊԻ-011/0) օրենքների նախագծերի փաթեթ,

(առաջին ընթերցում),

(երկրորդ ընթերցում):

5) «Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների օգտագործման հետեւանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման եւ կանխարգելման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Պ-812-18.12.2020-ՏՀ-011/0) և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» (Պ-8121-18.12.2020-ՏՀ-011/0) օրենքների նախագծերի փաթեթ,

(առաջին ընթերցում),

(երկրորդ ընթերցում):

6) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-813-21.12.2020-ՏՀ-011/0) օրենքի նախագիծ,

(առաջին ընթերցում),

(երկրորդ ընթերցում):

7) «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» (Պ-821-23.12.2020-ՏՀ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ,

(առաջին ընթերցում),

(երկրորդ ընթերցում):

8) «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության (Պ-822-23.12.2020-ՏՏԳԲ-011/0) օրենքների նախագծերի փաթեթ,

(առաջին ընթերցում),

(երկրորդ ընթերցում):

9) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-790-30.11.2020-ԱՍ-011/0) ՀՀ օրենքի նախագիծ,

(առաջին ընթերցում)

(երկրորդ ընթերցում):

10) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ 2020 թվականի հունվարի 22-ի ՀՕ-6-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-806-15.12.2020-ՊԻ-011/0) ՀՀ օրենքի նախագիծ,

(առաջին ընթերցում)

(երկրորդ ընթերցում):

11) «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-796-04.12.2020-ՏՀ-011/0) ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ,

(առաջին ընթերցում)

(երկրորդ ընթերցում):

12) «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-817-22.12.2020-ՏՀ-011/0) ՀՀ օրենքի նախագիծ,

(առաջին ընթերցում)

(երկրորդ ընթերցում):

13) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-786-25.11.2020-ՏՀ-011/0) ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ,

(առաջին ընթերցում)

(երկրորդ ընթերցում):

14) «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Խ-750-30.09.2020-ՊԻ-011/1) օրենքների նախագծերի փաթեթ:

(երկրորդ ընթերցում):

15) Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ (Խ-824-25.12.2020--012/0):

2. Արտահերթ նիստը նախաձեռնող պատգամավորների ներկայացուցիչ նշանակել Բաբկեն Թունյանին:

3. Կից ներկայացնում ենք՝

1) Օրակարգում ընդգրկված նախագծերը և կից նյութերը,

2) «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 6-րդ մասի և 8-րդ մասի 2-րդ կետին համապատասխան՝ 2020թ-ի դեկտեմբերի 28-ին սահմանված օրակարգով և ժամկետում արտահերթ նստաշրջան գումարելուն, ինչպես նաև համապատասխան նախագծերի փաթեթներն առաջին և երկրորդ ընթերցմամբ քննարկելու մասին հարցերն արտահերթ նստաշրջանի օրակարգում ընդգրկելու վերաբերյալ Ազգային ժողովի խորհրդին միջնորդություն ներկայացնելու մասին «Իմ քայլը» խմբակցության որոշումը,

3) «2020թ-ի դեկտեմբերի 28-ին Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի օրակարգային հարցերի քննարկման հատուկ ընթացակարգի մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը:

1. [illegible] (034)
2. [illegible] (064)
3. [illegible] (022)
4. [illegible] (029)
5. [illegible] 086
6. [illegible] 013
7. [illegible] 070
8. [illegible] 011
9. [illegible] 088
10. [illegible] 051
11. [illegible]
12. [illegible] 056
[illegible] 026
13 [illegible] 038
14. [illegible] 030
15 [illegible] 019
16 [illegible] 082
17 [illegible] 023
18 [illegible] 031
19 [illegible] 043
0 [illegible] 017

21 [illegible] 001

22. [illegible] 021

23. [illegible] 032

24. [illegible] 042

25. [illegible] 036

26 [illegible] 039

27 [illegible] 002

28 [illegible] 003

29. [illegible] 014

30. [illegible] 040

31. [illegible] (055)

32. [illegible] (066)

33. [illegible] (052)

34. [illegible] (069)

35. [illegible] (004)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ԵՐԿՈՒ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 6-րդ մասով և 8-րդ մասի 2-րդ կետով «Իմ քայլը» խմբակցությունը որոշում է.

Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

2020թ-ի դեկտեմբերի 28-ին, ժամը 11:00-ին՝ Ազգային ժողովի ---- պատգամավորների նախաձեռնությամբ, սահմանված օրակարգով՝ ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» (Կ-820-23.12.2020-ՊԱ 011/0) ՀՀ օրենքի նախագիծ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (Կ-818-22.12.2020-ՊԻ-011/0) ՀՀ օրենքի նախագիծ, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամի ընտրություն, «Իմ քայլը» խմբակցության պատգամավորներ Նազելի Բաղդասարյանի, Հերիքնազ Տիգրանյանի կողմից շրջանառության մեջ դրված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում» լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-801-10.12.2020-ՊԻ-011/0) օրենքների նախագծերի փաթեթ, Բաբկեն Թունյանի, Վլադիմիր Վարդանյանի, Հովիկ Աղազարյանի, Նարեկ Զեյնալյանի կողմից շրջանառության մեջ դրված «Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների օգտագործման հետեւանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման եւ կանխարգելման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Պ-812-18.12.2020-ՏՀ-011/0) և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» (Պ-8121-18.12.2020-ՏՀ-011/0) օրենքների նախագծերի փաթեթը, Բաբկեն Թունյանի կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-813-21.12.2020-ՏՀ-011/0) օրենքի նախագիծ, Սիսակ Գաբրիելյանի կողմից «Պետական տուրքի մասին օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» (Պ-821-23.12.2020-ՏՀ-011/0) ՀՀ օրենքի նախագիծը, Սիսակ Գաբրիելյանի, Արուսյակ Ջուլհակյանի, Սոնա Ղազարյանի կողմից շրջանառության մեջ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» (Պ-822-23.12.2020-ՏՏԳԲ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-790-30.11.2020-ԱՍ-011/0),«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ 2020 թվականի հունվարի 22-ի ՀՕ-6-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-806-15.12.2020-ՊԻ-011/0), «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-

796-04.12.2020-ՏՀ-011/0) ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-817-22.12.2020-ՏՀ-011/0), «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-786-25.11.2020-ՏՀ-011/0) ՀՀ օրենքի նախագծերը երկու ընթերցմամբ քննարկելու մասին, «Իմ քայլը» խմբակցության կողմից շրջանառության մեջ դրված «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Խ-750-30.09.2020-ՊԻ-011/1) երկրորդ ընթերցմամբ քննարկելու մասին, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը (Խ-824-25.12.2020--012/0) քննարկելու մասին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1.Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը ստեղծվել է 2017թ. որի նպատակն է սոցիալական բարօրության, կայուն եւ հավասար ապահովագրական հատուցումներ տրամադրել հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքներին, ինչպես նաեւ հայրենիքի պաշտպանության ժամանակ 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին: Ապահովագրական հատուցումները տրամադրվում են միանվագ վճարի, ինչպես նաեւ 20 տարվա ընթացքում՝ հավասարաչափ ամսական վճարումների տեսքով: Զինհիմնադրամի միջոցները հիմնական գոյանում են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրոշմանիշային վճարներից, որի չափը ներկայումս կազմում է 1000 դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մշակվել է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-245-Ն օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որով առաջարկվում է 1000 դրամ բոլորի համար հավասարաչափ վճարի փոխարեն, սահմանել դրոշմանիշային վճարի պրոգրեսիվ սանդղակ, որի համաձայն կախված եկամտի չափից վարձու աշխատողները, անհատ ձեռներեցները, նոտարները եւ այլ վճարողները կվճարեն 1500-ից մինչեւ 15 000 դրամի չափով դրոշմանիշային վճար:

Նախագծի ընդունման արդյունքում Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի մուտքերը կավելանան, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա ապահովել զոհված զինծառայողների ընտանիքներին, ինչպես նաեւ 1-ին եւ 2-րդ խմբի հաշմադամություն ձեռք բերած զինծառայողներին՝ օրենքով սահմանված միանվագ եւ ամսական վճարումների կատարումը: Բացի այդ կփոփոխվի, Զինծառայողների հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ձեւավորման կարգը:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 44-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին, իսկ օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացին կարող է դատարանով մահացած ճանաչվել ոչ շուտ, քան ռազմական գործողությունների ավարտից երկու տարի հետո:

Օրենքի նախագծի համաձայն նախատեսվում է ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողին կամ այլ քաղաքացուն դատական կարգով անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու հնարավորություն ընձեռել զինծառայողի կամ այլ քաղաքացու գտնվելու վայրի մասին երեք ամսվա ընթացքում տեղեկություններ չլինելու դեպքում, ինչպես նաեւ նույն պայմաններում անհայտ կորածին դատարանի կողմից մահացած ճանաչելու ժամկետը երկու տարվա փոխարեն սահմանել մեկ տարի՝ ռազմական գործողությունների ավարտից հետո, ինչպես նաեւ նախատեսվում է, որ օրենքի գործողությանը տրվում է հետադարձ ուժ՝ 2020թ. սեպտեմբերի 27-ից:

3. ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամի ընտրության հրատապությունը պայմանավորված է ՀՀ հաշվեքննիչ պալատի բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությամբ:

4. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ նաեւ՝ Հանձնաժողով) անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար ձեւավորվում է մրցութային խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ): Սույն Օրենքով կարգավորվում է նաեւ Խորհրդի կազմավորման կարգը: Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Խորհուրդը կազմված է Կառավարության, Ազգային ժողովի, Բարձրագույն դատական խորհրդի, Մարդու իրավունքների պաշտպանի եւ Փաստաբանների պալատի նշանակած մեկական անդամներից: Հանձնաժողովի անդամի ընտրության համար խորհուրդը ձեւավորվելուց հետո 30-օրյա ժամկետում հայտարարում է մրցույթ: Օրենքի գործնական կիրառման ընթացքում պարզ դարձավ, որ խնդիր է ծագել Խորհրդի ձեւավորման պահի հստակեցման հետ կապված, ինչն էլ առաջացրել է օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն:

Գործող կարգավորման համաձայն Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար Ազգային ժողովի նախագահը ձեւավորում է մրցութային խորհուրդ, ինչը ենթադրում է համապատասխան իրակավական ակտի հրապարակում:

Միաժամանակ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-440-Ն օրենքով կատարված փոփոխությունների համաձայն 2019թ. դեկտեմբերի 6-ին առաջացած Հանձնաժողովի թափուր անդամի ընտրության մրցութային խորհուրդը ձեւավորված է համարվում վերջին անդամի նշանակման օրվանից, որը եղել է հոկտեմբերի 19-ին: Սակայն պատերազմական վիճակով եւ ռազմական դրությամբ պայմանավոված խորհուրդը գործնականում աշխատանքներ չի կատարել, իսկ մրցույթի անցկացման 30-օրյա ժամկետը լրացել է:Վերոգրյալը հաշվի առնելով՝ Նախագծով առաջարկվում է հստակեցնել մրցութային խորհրդի ձեւավորման պահը՝ այն պայմանավորելով Ազգային ժողովի նախագահի կողմից համապատասխան ակտի ընդունմամբ, եւ խորհրդի

առաջին կազմի համար երակարաձգել մրցույթ անցկացնելու ժամկետը եւս 30 օրով՝ սահմանելով 60 օր:

Առաջարկվող կարգավորումը կվերացնի Մրցութային խորհրդի ձեւավորված համարվելու հետ կապված տարընթերցումները, եւ ողջամիտ ժամանակ կտրվի Խորհրդին Հանձնաժողովի՝ 2019թ. դեկտեմբերի 6-ին առաջացած թափուր անդամի մրցույթի կազմակերպման համար:

5.«Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների օգտագործման հետեւանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման եւ կանխարգելման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է կորոնավիրուսից եւ ռազմական գործողություններից հետո ստեղծված իրավիճակում տնտեսության եւ հարկային եկամուտների վրա բացասական ազդեցության մեղմամբ, ինչպես նաեւ՝ որոշ դրույթների հետ կապված լրացուցիչ վերլուծություններ անելու հնարավորության ստեղծմամբ:

2020 թվականի փետրվարի 13-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների օգտագործման հետեւանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման եւ կանխարգելման մասին» օրենքը եւ հարակից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրինագծերի փաթեթը:

Մեկ տարով հետաձգել «Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների օգտագործման հետեւանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման եւ կանխարգելման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի այն դրույթները, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

«Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների օգտագործման հետեւանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման եւ կանխարգելման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման արդյունքում կմեղմվի այս ոլորտում գործող մի քանի հազար տնտեսվարողների վրա բացասական ազդեցությունը՝ թույլ տալով առժամանակ ստանալ որոշակի եկամուտներ:

Մյուս կողմից, այս դրույթների հետաձգումը թույլ կտա ժամանակ տրամադրել եւ պատշաճ վերլուծել այս փաթեթի տնտեսական եւ այլ ազդեցությունները

կարճաժամկետ եւ միջնաժամկետ հեռանկարում, եւ հասկանալ՝ արդյոք առանձին դրույթների փոփոխության կամ չեղարկման անհրաժեշտություն կա՞, թե՞ ոչ:

6.Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կորոնավիրուսի հետեւանքով տնտեսավարողների մոտ առաջացել է իրացվելիության խնդիր, իսկ տնտեսությունը ներդրումների կարիք ունի: Ուստի, անհրաժեշտություն է առաջացել, հնարավորություն ընձեռել բոլոր տնտեսավարողներին՝ կատարվող ներդրումների համար, ժամկետը եւս 1 տարով երկարաձգել՝ մինչեւ 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

7.Ներկայումս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28.2-րդ հոդվածում՝ մաքսային գործառնությունների համար պետական տուրքից ազատման որոշ դեպքեր հստակ սահմանված չլինելու հանգամանքով պայմանավորված երկիմաստ մեկնաբանությունների տեղիք են տալիս: ՈՒստի անհրաժեշտություն կա դրույթները վերաշարադրելու եւ կիրարկման ընթացքում հնարավոր թյուրըմբռնումներից խուսափելու համար դրանք հստակեցնելու:

«Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքներն անհատույց հանձնվում են պետությանը, ինչպես նաեւ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի համաձայն ազատվում են մաքսատուրքերից եւ հարկերից, առաջարկվել է այդ ապրանքներն ազատել նաեւ պետական տուրքից: Վերը նշված հիմնավորումներից ելնելով՝ նախագծով առաջարկվում է Օրենքի 28.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 6-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ եւ նույն մասում լրացնել նոր 7-րդ կետ:

8. 2019 թվականի մարտի 22-ի թիվ ՎԴ/0150/05/16 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու վարչական իրավախախտման արձանագրությունը պետք է կազմվի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով» սահմանված կանոնների, մասնավորապես՝ ենթադրյալ իրավախախտի մասնակցության պահանջի պահպանմամբ: Ուստի Երեւան քաղաքի ավագանու 25.12.2012 թվականի թիվ 563-Ն որոշմամբ սահմանված՝ վարչական իրավախախտման արձանագրությունն իրավախախտի բացակայությամբ կազմելու եւ հետո վերջինիս ուղարկելու կանոնը չի կարող կիրառվել, քանի որ վերջինս հակասում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի, այն է՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքին»:

«Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է տուգանքի նշանակում ձեռնարկատիրական գործունեության նպատակով ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը

համայնքային վճարովի կայանատեղիում կայանելու համար օրենքով սահմանված տեղական վճարը չվճարելու համար:

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը նաեւ հնարավորություն է ընձեռում համայնքապետարանին Երեւանում կայանատեղիի դրույքաչափերը սահմանել ըստ վարչական շրջանների, այդ թվում՝ նաեւ գոտիավորման սկզբունքով:

9.2019 թվականի նոյեմբերի 19-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-223-Ն օրենքով 2021 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվեց 68000 դրամ: Նվազագույն ամսական աշխատավարձի անվանական արժեքը (հարկերը եւ նպատակային սոցիալական վճարը ներառյալ), 2020 թվականին կազմեց 91275 դրամ, որի 80 տոկոսը 73020 դրամ է: Մինչդեռ պետական պաշտոն եւ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը 2020 թվականին թվականի համար նախատեսված էր 66140 դրամ:

Վերը նշված խնդրի կարգավորման նպատակով «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-224-Ն օրենքով լրացում կատարվեց «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 5-րդ հոդվածում եւ նախատեսվեց, որ պետական պաշտոն եւ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը 2021 թվականի համար չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 70 տոկոսից եւ հիշյալ օրենքն (ՀՕ-224-Ն) ընդունվեց որպես ժամանակավոր նորմատիվ ակտ, որի գործողության ժամկետն ավարտվում է 2020 թվականի դեկտեմբերի 31-ին:

10. 2020 թվականի հունվարի 22-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-6-Ն ՀՀ օրենքը, որով նախատեսվում է Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասից հանել «սահմանված կարգով հաստատված շինության նախագիծը» բառերը՝ հիմքում ունենալով այն հանգամանքը, որ շինության ավարտական ակտը իրավունքի պետական գրանցման ներկայացնելու փուլում նախագծային փաստաթղթերի անհրաժեշտությունը բացակայում է? Օրենքը ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանվել է 2021 թվականի հունվարի 1-ը: Ժամկետի սահմանումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ նախագծային փաստաթղթերը պետք է էլեկտրոնային եղանակով ներկայացվեն Կադաստրի կոմիտե: Այդուհանդերձ, մինչեւ 2021 թվականի հունվարի 1-ը հնարավոր չէ ապահովել էլեկտրոնային հարթակի

գործարկումը, փոխգործելիությունը՝ տեխնիկական դժվարություններից ելնելով, հետեւաբար անհրաժեշտություն է առաջացել օրենքը ուժի մեջ մտնելու ժամկետը երկարաձգել մինչեւ 2022 թվականի հունվարի1-ը:

Նախագծի ընդունմամբ հնարավորություն է տրվելու 2022 թվականի հունվարի 1-ից էլեկտրոնային հարթակի գործարկմամբ փոխգործելիության ապահովմամբ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Կադաստրի կոմիտե էլեկտրոնային եղանակով ներկայացնելու տրամադրված շինարարության թույլտվությունները, շինության նախագծերը, շինարարության ավարտի ակտերը եւ շինության շահագործման թույլտվությունները:

11. Նախագծի ընդունման հրատապությունը պայմանավորված է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մոտ 2020 թվականի հունվարի 30-ին կայացած խորհրդակցության N Վ/09-2020 արձանագրության հանձնարարականով: Նպատակը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջարկությամբ 2021 թվականի հունվարի 1-ից հետո ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ եւ 12-րդ կետերով սահմանված դեպքերում մինչեւ 2021 թվականի հունվարի 1-ը գործած կադաստրային արժեքների չափերի պահպանումն է:

12. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ 2021 թվականի հունվարի 1-ից չի թույլատրվելու առանց սահմանված կարգով հաստատված համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, կառուցապատման նպատակներով հողամասերի եւ (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրումը, նպատակ ունենալով մինչեւ 2021 թվականը բոլոր համայնքներն ապահովել գլխավոր հատակագծերով, որի շրջանակում 2017 թվականից իրականացվում է «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» ծրագիրը: Հաշվի առնելով ֆինանսավորման ծավալները, ինչպես նաեւ առկա մասնագիտական ներուժը (այդ թվում՝ նախագծային կազմակերպությունների), ծրագիրն ավարտելու իրատեսական ժամկետը 2024 թվականն է: Այս պատճառով, անհրաժեշտություն է առաջանում վերանայել առանց սահմանված կարգով հաստատված համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, կառուցապատման նպատակներով հողամասերի եւ (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման վերջնաժամկետը:

13. Նախագծի փաթեթի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքի (ցեմենտ) ներքին շուկայի եւ տեղական արտադրությունը պաշտպանելու, ներմուծվող ու տեղում արտադրվող ապրանքների համար հավասար մրցակցության դաշտ ապահովելու, ինչպես նաեւ ցեմենտի ներմուծման հետ կապված կարգավորումները Եվրասիական տնտեսական միության օրենսդրությունը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

14. Սույն օրենքների նախագծերի փաթեթի ընդունմամբ ակնկալվում է հետևյալ խնդիրների լուծումը՝ կուսակցությունների և կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացում, բազմակուսակցական համակարգի ու գաղափարական բազմակարծության խրախուսում, կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության բարձրացում, կուսակցական ֆինանսական միջոցների նկատմամբ հանրային վերահսկողության գործիքակազմի կատարելագործում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, քաղաքական գործունեության և բիզնեսի տարանջատում, կուսակցական գործունեության վրա մասնավոր շահերի ազդեցության նվազեցում, կուսակցական գործունեության ներառականության խթանում, կուսակցություններին ներքին ժողովրդավարության խրախուսում:

15. Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի գրառումներից և հրապարակային խոսքից պարզ է դառնում, որ պատգամավորի կողմից արվում են Սահմանադրությամբ ամրագրված մարդու՝ որպես բարձրագույն արժեք, անօտարելի արժանապատվությունը ոտնահարող, նվաստացնող և վիրավորանք պարունակող հայտարարություններ, ինչպես նաև Սահմանադրությանը ուղղակիորեն հակասող դասակարգումներ մարդկանց միջև, ավելին՝ այդ դասակարգմամբ պայմանավորելով վերջիններիս Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար՝ ընտրելու իրավունքի իրացումը:

Վերոնշյալն ակնբախ է դարձնում, որ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը չի կարող լինել մի հանձնաժողովի նախագահ, որի գործունեության առանցքը մարդու իրավունքների պաշտպանությունն է:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՄԱԿՈՒՆՑ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1.Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասը Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ 2020թ-ի դեկտեմբերի 28-ին գումարված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի օրակարգում երկու ընթերցմամբ ընդգրկված նախագծերի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրա ընդունումից հետո՝ 24 ժամվա ընթացքում:
2) Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծերի վերաբերյալ գրավոր առաջարկները, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվական, դեկտեմբերի —